

THE CITIZEN.

ՅՐԷՂՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

ԱՊՐԻԼ 10, 1909

ԿԻՆ 5 ՍԷՆԹ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ՇՈՒՐՁԸ

Ընտրական պայքարը կը գոցուի այսօր: Յառաջիկայ երկու- շարթի քաղաքիս քուէատուները պիտի երթան իրենց վճիռը ալ- ձակելու: Հայ քաղաքացիներն ալ հարկ եղածին չափ լսեցին ու կարդացին թէ՛ թեկնածուներու նկատմամբ և թէ՛ զինետուները գոցել տալու խնդրոյն վրայ որուն շուրջը կը դառնայ պայքարին ամենէ՛ բուռն կռիւներն ու մրցումները: Գինետուներն ու Եկեղե- ցին իրարու դէմ լարուած են հրապարակին վրայ:

Գիտելի կարեւոր կէտ մըն է թեկնածուներու բռնած գիրքը Հայերու հանդէպ: Ասոնք ամենն ալ համակրութիւն ու սէր կը տածեն մեզի համար, ու իրենց հրապարակային խոստովանու- թիւնները կը պարզեն երևոյթ մը որ չենք կրնար առանց շեշ- տելու անցնել: Այս խոստովանութիւնները որքան ալ անհաւա- տարի թուին մեզ՝ բայց խոստովանելու ենք հիմա թէ չեն կրնար օգը ցնդիլ բոլորովին՝ առանց հետք մը թողելու թեկնածուին վրայ որ դժուարաւ կրնայ ար մը զրօնի բոլորովին: Մեր քուէն զէնք մըն է որ կրնանք խոստովանուիմք որուն զէմ՝ դարձնել ի հարկին, և այս պատուական զէնքը սկսած է արդէն ժողովրդին կարող դասակարգին մէջ յարգանքի, սիրոյ և համակրանաց գոնէ նշոյլը ներշնչել: Հայ քուէն մնայուն սպասնալիք մը ըլլալու համ- բարը շահի սկսած է արդէն: Սակայն ի հարկէ Հայն ալ, միւս կողմէ, վերին աստիճանի զգուշութեամբ գործածելու է այս երկ- սայրի զէնքը: Աստա՛հ ըլլանք թէ մեծ չէ մեր զօրութիւնը, ուս- տի գիտնալու ենք խոհմութեամբ օգտուիլ անկէ՛ առանց այլոց հակառակութիւնը գրգռելու: Միջին ճամբան ընտրելու ենք մեք, զի փափուկ է մեր զիրքը: Հայ քուէն պարապ հրացանի մը կը նմանի իրաւամբ որ կը վախցունէ, բայց չի կրնար մեծ վնաս մը պատճառել: Քաջ ըմբռնենք մեր զօրութիւնն և ըստ այնմ գոր- ծածենք մեր պարապ զէնքերը:

Ընտրելիները ծանօթ են հիմա հայ քուէատուներուն: Հարկ չկայ մատնանիշ ընել անոնց մէջէն այս կամ այն թեկնածուն: Յաջողողները Հայոց ընտրելիները եղած պիտի ըլլան. ամենն ալ սակայն մեզի բարեկամ մնալու են: Հայը ոչ մէկ թեկնածուի դէմ պէտք ունի զինուելու, զի չկայ անոնց մէջ մէկը, իրենց խոստովանութեանց համաձայն՝ որ հակակիր եղած ըլլայ Հայու- թեան: Անոնց սիրտերը մենք կարող չենք կարդալու, բայց իրաւ- ունք ալ չունինք յոռտեսներ դառնալու:

Հայոց քուէն մեծաւ մասամբ սըլուններու փակուելուն ի նը- պաստ պիտի ըլլան: Արդարեւ սգելից ըմպելիքները աշխարհէ՛ս բնաջինջ ընելը օրհնութիւն մըն է մարդկութեան համար, բայց եթէ գինետուներն գոցելով թոյլ պիտի տանք ուրիշներու ըմպելի վաճառել առանց արտօնագրի ու գոց դուռներու ետև, ինչպէս որ տեղի կունենայ ուրիշ նահանգներու մէջ, լաւ է որ սըլուն- ները բաց մնան, կանոնաւորութիւն ու ոստիկանութեան խիստ հըս- կողութեան ենթարկուին: Մեզ կը թուի թէ այս ժողովուրդը կը սիրէ տակաւին խմել ու դեռ պէտք ունի ուսանելու և համոզ- ուելու թէ ըմպելիքը չարիք մըն է և վտանգ մը հասարակաց բարոյականին ու ընտանիքի սրբութեան դէմ:

Քուէ տանք մեր խղճի ձայնին լսելով:

Աւրա Է. ըՄնօ — Քաղաքիս Տրդ ուօրաէն թեկնածու է Սի- թի Թրըսթիի համար այս ծանօթ ու յարգուած փաստարանը որ Հայոց հետ շատ տարիներէ ի վեր մօտէն շփում ունեցած է ու սիրուած է ընդհանրապէս: Երկու տարի առաջ թեկնածու մըն էր ինք Բարձրագոյն Ատենի դատաւորութեան պաշտօնին. թէպէտ պղտիկ փոքրամասնութեան մը քուէով կորսնցուց ընտրութիւնը՝ բայց ընդհանրապէս նկատուած է նոյն Ատենի յաջորդ դատա-ւորը այս գաւառի համար: Անոր կարողութիւնը, բարձր արժա- նիքն ու արդարասիրութիւնը ճանչցուած է գաւառիս ընդհանուր ժողովրդէն: Սիթի Թրըսթիի պաշտօնը թէև բաւական մեծ նը- կատուած չէ իրեն համար՝ բայց իր շրջանակի և քաղաքիս ընդ- հանուր ժողովրդեան ծառայելու պարտականութիւնն հարկադրած են զայն տեղի տալ բարեկամներու և դրացիներու թախանձան- քին ու ընտրելի ներկայանալու: Անոր համառօտ կենսագրականը երկու տարի առաջ հրատարակուած է լրագրոյս 120րդ թուին մէջ՝ զոր աւելորդ կը սեպենք արտատպել հոս ամբողջութեամբ, այլ կը բաւականանանք ըսել թէ փաստարան ըՄնօ սերած է ուղ- զակի Փիլիպիներէն. իր մեծ հայրը՝ Նիքօլա ըՄնօ ամուսինն էր Քաթիլըն՝ Հապքընսի որ իր հօր՝ Ստեփան Քանսթընսի հետ Փիլ- մըթի եկաւ Մէյֆլաւըր առաջապատանալով: Փաստարան ըՄնօ Հարվըրտէն ընթացաւարտ ըլլալէ յետոյ բաւական ատեն Մա- սաչուսէթս մնացած ու 17 տարի առաջ Ֆրէզնօ եկած է. հոս վարած է հանրային կարեւոր պաշտօններ ու սիրուած է ընդհա- նուր ժողովրդէն իբրև կարող ու արդարակորով պաշտօնեայ: Լայն մտքի, բարձր կրթութեան, քաղցր բնավորութեան և մեղմ խառ- նուածքի տէր մարդ է ինք:

Ֆրէզնօի Տրդ շրջանակը որ քաղաքիս հայաշատ մասը կը ներկայացնէ, ըՄնօի նման մէկը իրեն Թրըսթին ընտրելով՝ պա- տի բերած կըլլայ թէ՛ Տրդ ուօրաին և թէ՛ բոլոր ժողովրդեան: Ա. Է. ըՄնօ հայ քուէն պիտի գնահատէ մեծապէս:

Ճէօրձ Փիքֆլըտ — Ֆրէզնօի մէջ հաստատուած է այս ծա- նօթ թեկնածուն 29 տարիներէ ի վեր ու յարգուած է ընդհանուր ժողովրդէն իբրև արդարախոհ և յաջող անձ: Ինք անկախ թեկ- նածու մըն է Սիթի Թրըսթիի համար քաղաքիս եօթներորդ շըր- ջանակէն, ու այս պաշտօնին ընտրուելով նպատակ ունի միայն ծառայել ժողովրդին որմէ շատեր ստիպած են զայն հրապարակ գալ իբր ընտրելի: Փիքֆլըտ որ Մէյսըն մըն է, գործէ քաշուած մէկն է հիմա որ պարապած է հոս մնալաճառութեամբ, հացա- գործութեամբ, ճաշարանի, պանդոկի, ախտապանի և հօթէլի գործերով ու անոնց ամենուն մէջ ալ փայլուն յաջողութիւն գը- տած է: Պաշտօնն ու անոր վարձատրութիւնը հրապոյր չունին իրեն համար. գործին բարոյական մասն է որ կը մղէ զինքը ծա- ռայել հանրութեան: Փիքֆլըտ սիրուած է նաև Հայերէն՝ իր ազատամտութեան համար: Աղղային խտրութեան չի հաւտար. կը յարգէ պարտաճանաչ մարդը՝ հոգ չէ թէ ո՛ր ազգի պատկանած ըլլայ այն:

Հայ քաղաքացիք իրենց քուէն այս թեկնածուին տալով՝ ա- զատամիտ, անկախ ու արթուն ընտրելի մը համար քուէար- կած կըլլան: Յիշէ զայն երբ քուէ տալու երթաս:

Օ. Մ. Թամսըն — Գպրոցներու Հոգաբարձութեան անդամ- ները նիւթական վարձատրութիւն չեն ընդունիր, ու այդ պաշ- տօնին ձգտողները լոկ հանրային կրթութեան համար ծառայելու պարտականութենէն շարժած կըլլան: Թամսըն որ Հոգաբարձու

մըն է հիմայ, յանձն առած է ծառայել չորս տարի ևս: Իր ցոյց տուած կարողութիւն և յարմարութիւնը այս պատահականապէս ծանր պաշտօնին կը պարտաւորեն ժողովուրդը վերընտրել զայն:

Արչիպոստ, Քիթթըրը և Կոլմըն — Այս երեք պատուաւոր քաղաքացիները թեկնածու են Դպրոցներու Հոգաբարձու լինելու անվճար բայց ծանր պաշտօնին: Ե եքն ալ մեծ յարմարութիւն ունին անոր: Ընդհանուր ժողովուրդը ինչպէս նաև հայ քուէատուները իրենց քուէն արժանաւորապէս գործածած պիտի ըլլան երբ քաղաքիս կրթական փափուկ գործը վստահին այս կարող ու ծանօթ թեկնածուներուն:

Իւճին Ք. ըՍմիթ — Ֆրէզնօի չորրորդ ուօրտէն Սիթի թըրըսթի թեկնածու ներկայացած է այս հանրածանօթ քընթէքթըրը որ քաղաքիս յարգուած ու յաջող ճարտարապետներէ մին է: Թէև իր գործի բերմամբ քաղաքէս բացակայ ըլլալ ստիպուած լինելով չէ կարող քուէատուներուն մօտէն խօսիլ, բայց իր կարողութիւնը, համբաւը և յարմարութիւնը բաւական պիտի ըլլան խօսիլ իրեն համար բոլոր քուէատուներուն՝ երբ անոնք երթան գալիք ընտրութեան օրը իրենց քուէները տալու: Մէյսըն մըն է ըՍմիթէ, ազատամիտ, բարեկիրթ ու արթուն մէկը որուն վարչական կարողութիւնը վեր է ամեն կասկածէ: Անոր համար տրուած քուէն անարժան թեկնածուի մը ի նպաստ միտուած չի ըլլար: Հայոց և իր հայ բարեկամաց քուէն կը խնդրէ ըՍմիթէ:

Ֆրէնկ Լէնինկ — Ոստիկանական դատաւորի ընտրելի է Լէնինկ: Կը յիշուի թէ չորս տարի առաջ ալ նոյն պաշտօնին թեկնածուն էր ինք որ 86 քուէով միայն կորսնցուց ընտրութիւնը: Այս անգամ կրկին անգամ կը ներկայանայ քաղաքիս քուէատուներուն և անոնց քուէն կը խնդրէ՝ ընտրուելու համար իր ձգտած նոյն պաշտօնին: Չորս տարի առաջ ի մէջ այլոց Քաղաքացիին հետեւեալները կը գրէր այս ժողովրդական փաստաբանին համար, որ այս քաղաքի մէջ հաստատուած է 21 տարիէ ի վեր, և վարած է հոս շատ մը կարևոր պաշտօններ: "Լէնինկ անգամ եղած է կրթական գործոց ժողովին, վարած է Ֆրէզնօի քաղաքային փաստաբանի ու նախնական դատաւորի պաշտօնները, և հիմայ դաշնակցական դատաւորի տիղական Քմիշըրն է ինք:

"Աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլար զայն Քաղաքացիի ընթերցողներուն ծանօթացնելու փորձ ընել՝ քանի որ Լէնինկը լաւ ու պատուաւոր կերպիւ ճանչցուած է Հայոց մէջ:

"Վերջի քանի մը տարիներս դժբաղդութեան տարիներ եղան այս անձին համար. իր զաւակը կորսնցուց յիշ ժամանակ առաջ, անցեալ տարի ծանրապէս հիւանդացաւ՝ արեան թունաւորում ունենալով, և այդ առթիւ ալ ձեռքի քանի մը մատները անգործածելի դարձան, ու քանի մը շարաթներ առաջ արկածի մը հանդիպելով ձախ ձեռքին 3 մատները կորսնցուց: Հին աշխատաւորի մը հանրային գոհացուցիչ ծառայութիւնները, իր այս նեղ օրերուն մէջ, կերպով մը վարձատրելու համար քաղաքացիք ընտրելու են զայն իր ձգտած պաշտօնին գոր վարելու կարող ըլլալ փորձով ցոյց տուած է արդէն:

Ֆրէնկ Լինինկը չորսորդ միջոցաւ կը գիմէ Հայ քուէատուներուն որոնց մէջ բազմաթիւ բարեկամներ ունի, ու կը խնդրէ անոնց օգնութիւնը ընտրուելու այս անգամ իր ձգտած պաշտօնին գոր պիտի կարենայ վարել ամենայն արդարութեամբ և գոհացուցիչ կերպիւ:

Քուէդ Լինինկի տուր, և ջանայ որ բարեկամներ ալ անոր ի նպաստ քուէարկեն:

Չալըփ—քաղաքիս երկրորդ Ուօրտէն Սիթի թըրըսթիի համար թեկնածու է Չալըփ որ նոյն պաշտօնը կը վարէ հիմայ. ինք Պոհեմիացի ծնողքէ սերած է. և արդէն անոր գիմագիծը իր օտարական մը ըլլալով մատնէ դիւրութեամբ. Հայու մ'արտաքին երևոյթն ունի: Չալըփ հոս եկած է 9 տարի առաջ. երկու տարի ուրիշներու համար գործելէ վերջ՝ 75 տուր դրամազուխով անձնական գործ մը սկսեց որ հիմայ ընդարձակ նպարագանաի

խանութներէն մին կը ներկայացնէ քաղաքիս մէջ. իր յաջողութիւնը ի հարկէ անձնական ու վարչական կարողութեան արդիւնք է: Տարի մը առաջ քաղաքապետ Լայըն զայն Սիթի թըրըսթի կարգեց, ու այն օրէն ի վեր իր պաշտօնավարութեան մէջ մեծ յարմարութիւն ցոյց տուաւ: Ծառայած է քանի մը կարևոր յանձնախմբերու մէջ ու իր ծառայութիւնը գնահատուած է ժողովրդէն: Սուրի խնդրոյն մէջ ուրիշներու նման այս թեկնածուն ալ ժողովրդի կամքին հնազանդելու կողմն է, և ամէն պարագայի տակ գինետուները կանոնաւորելու կը հաւատայ բառին խիստ նշանակութեամբ:

Չալըփ շատ մը Հայ յանախորդներ ունի և ամենէն ալ սիրուած է. ինք ալ փոխադարձաբար կը սիրէ Հայեր ու կը համակրի անոնց: Եթէ ընտրուի՝ Չալըփ պիտի ծառայէ բոլոր ժողովրդին ու իր ձեռքէն եկածը պիտի ընէ արժանաւորապէս ծառայելու հանրութեան շահերուն:

Չալըփ Հայ քաղաքացիներու քուէն կը խնդրէ յարգանք:

Ու. Հ. Բայըն — Քաղաքիս ամենէ աւելի յարգուած հին ընտանիքներէ մէկին կը պատկանի այս հանրածանօթ ու ժողովրդական թեկնածուն որ կը ձգտի վերընտրուիլ Սիթի քըրքի պաշտօնին գոր կը վարէ չորս տարիէ ի վեր աննման յաջողութեամբ: Իր պաշտօնավարութիւնը գնահատուած է անխոր բոլոր ժողովրդէն, անանկ որ զայն վերընտրելու հարցը խօսակցութեան առարկայ է քաղաքիս մէջ: Խղճմիտ, կարող իր պաշտօնը ճշտութեամբ կատարող հանրային ծառայ մը վերընտրելու պատուական սովորութիւնը այս անգամ ալ յարգուելու է այս ժողովուրդէն որ միշտ դիացած է գնահատելու: Բայըն հոս հաստատուած է 36 տարի առաջ. իրը Լայսէնս Քլէքթըր երբ իր կարողութիւնը ցոյց տուաւ Սիթի քըրք ճանսընի օրով՝ մօտէն զայն դիտողները մեծ ապագայ գուշակեցին անոր հանրային ասպարէզին վրայ: Սխալած չէին անոնք: Բայըն չորս տարի առաջ յաջողութեան սանդուխին աստիճաններէն սկսեց վեր ելնել:

Բայըն աւելորդ է թերևս ըսել թէ սիրուած է Հայերէն: Արդարակորով, ազատամիտ ու աննախապաշարեալ պաշտօնեայ մը Հայոց յարգանքն ու համակրանքը կրնայ շահիլ մանաւանդ այս քաղաքիս մէջ ուր շատեր անտեղի հտկակրութիւն մը ունին մեզի դէմ՝ հայ ըլլալուն համար: Բայըն ազգային խտրութիւն չի գիտեր: Մարդը մարդ է իրեն համար:

Ֆրէզնօի հայ քաղաքացիները երբ Ապրիլ 12ին երթան իրենց քուէն տալու ատեն յիշելու են թէ Բայընի մէջ ոչ միայն կարող պաշտօնեայ մը կը գտնեն՝ այլ աննախապաշարեալ բարեկամ մը որ իրաւունք ունի բոլոր Հայոց քուէն առնելու:

Թ. Լ. Հըֆֆ— Առաջին անգամն է որ Հըֆֆ հանրային պաշտօնի կը ձգտի: Քաղաքիս առաջի Ուօրտէն Սիթի թըրըսթի թեկնածու է հիմայ: Այս գաւառի մէջ իր բնակութիւնը հաստատած է ինք 26 տարիներէ ի վեր, ու իր անձնական գործերուն մէջ միշտ սիրուած է ժողովրդէն՝ իր ուղիղ և պատուաւոր մարդ իր հայ բարեկամներն ու զբոսիները բարի գաղափար ունին անոր վրայ և կը սիրեն զայն: Հոս պարագայով է Հըֆֆ երկրագործութեամբ, ախոռապանութեամբ և արձառի գործերով ու միշտ յաջողած է իր գործերուն մէջ: Սըլունի խնդրոյն մէջ միւսներէ տարբեր համոզում մը չունի ինք. մեծամասնութեան կամքը խստիւ գործադրելու պատրաստ պաշտօնեայ մը պիտի ըլլայ եթէ ժողովուրդը զայն ընտրէ գալ շարթու:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

Թէլէֆօն ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ Մէյն 2595

344 ՃԷՅ Փողոց, Ֆրէզնօ: Հ. ԷԿԻՆՍԱՆ, ԽՍՐԱԿԻՐ.

Նամակ դրամ, կամ ծրար զրկել հետեւեալ հասցէին՝

To The Citizen Publishing Co.

P. O. Box 1224.

FRESNO, CAL.

ԸՆՏՐԵԼԻՆԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ

Ընտեսութիւնը — Այս փաստարանին անունը այն ատեն ընտանի դարձաւ հայ գաղթականութեան մէջ երբ ողբացեալ Պետրոսեանը սպաննող թէյլըրի դատը տեսնուեցաւ քաղաքիս մէջ: Քլէթթի ամբաստանաւոր փաստարաններէ մին էր և անոր տարրական իրաւանց օրինական պաշտպանը: Երբ այդ ծանօթ դատը փակուեցաւ ու Պըրնս իր տափակ ճառը արտասանեց՝ անտեղի և անմարդավայել յարձակումներ ընելով Հայ ցեղին ու ընդհանուր Հայութեան դէմ, հայ ժողովուրդը սխալմամբ Քլէթթին ալ Պըրնսի դատարարակից նկատեց մեր մասին ու շատեր սկսեցին ընդ ակամբ նայիլ անոր: Բայց Քլէթթի գաղափարակից չէր իր պաշտօնակից փաստարանին, ու իր ճառին մէջ Պըրնսի գիրքը չի բռնեց բնաւ: Ժամանակին թերթերը արձանագրած են անոր ատենախօսութիւնը որուն մէջ բառ մը չի կայ Հայ ազգին դէմ: Այլ ընդհակառակը Քլէթթի, ինչպէս այն ատեն նոյնպէս և հիմա, Հայերը կը նկատէ Ֆրէզնօի զարգացման, հարստութեան ու յառաջդիմութեան փափաքելի ազդակներէն մին, և կը վերագրէ անոնց՝ ազգային այն բոլոր առանձնայատկութիւնները որոնցմով Հայք կը պարծին իրաւամբ: Քլէթթի Հայոց պակասութիւններն ալ դիտէ և կը վերագրէ դայնս այն դարաւոր բռնութեան որուն ենթարկուած է Հայ ազգը, և վստահ է թէ ժամանակը պիտի բուժէ զանոնք ինչպէս որ սկսած է արդէն բուժել շատ պարագաներու տակ: Այս թեկնածուի անկեղծ համոզումներն են ասոնք զորս կը փափաքէր արդէն պատեհ առթիւ ներկայացնել Հայոց՝ անոնց գայթակղած միտքը լուսարանելու համար, և այս յարմար առիթ մը կը նկատէ անշուշտ: Քլէթթի ազատամիտ, զարգացած ու ինքի անձամբ օտարական Ամերիկացի մըն է Քանատայէն եկած: Նեղ մտքի տէր մարդ մը ըլլալէ շատ հեռի է ինք: Իր բազմաթիւ հայ յաճախորդներն ու բարեկամները կը վկայեն այս մասին:

Այս թեկնածուն որ քաղաքիս Չրդ շրջանակէն ընտրելի է Սիթի Թրքթիի պաշտօնին, Ֆրէզնօ եկած է 1876 թուականին երբ Չ տարեկան էր տակաւին: Իր մանկութիւնը հօրը ազարակին մէջ անցուց ու շատ քիչ առիթ ունեցաւ կրթութիւն մը մը ստանանալու: Ինքնօգնութեամբ սակայն շատ յառաջադիմեց երիտասարդ Քլէթթի, ու Չ տարեկան էր երբ յաջողեցաւ Ըսթէմփըրտ Համալսարանը մտնել: Քիչ մը ատեն հոն մնալէն վերջ ստիպուեցաւ Չ տարի դուրս մնալ, և ապա նորէն շարունակել իր ուսման փափաքը գոհացնելու համար: Քլէթթի ընթացաւարտ ըլլալէ վերջ՝ հաշտարար դատաւոր եղաւ այս գաւառի մէջ և երեք տարի այդ պաշտօնը շարունակելէ վերջ հրաժարեցաւ ու եկաւ Սէրմա հաստատուիլ: Հոս էր որ թէյլըրի դատը ստանձնեց իրր տեղական փաստարան: Երկու տարի առաջ՝ Քլէթթի Ֆրէզնօ փոխադրուեցաւ Տրուի գործերը վարելու՝ երբ նա բացակայ էր քաղաքէս, բայց բնաւ ընկերութիւն չունեցաւ փաստարան Պըրնսի հետ: մէկ ու կէս տարի առաջ երբ թափուր աթոռ մը կար Սիթի Թրքթիներու ժողովին մէջ՝ Քաղաքապետ Լայըն Քլէթթի մէջ գտաւ յարմար մէկը այդ պաշտօնին համար, ու զայն Թրքթի կարգեց: Լայըն սխալ ըրած չէր: Քլէթթի պաշտօնավարութիւնը փաստ մըն է այդ մասին: Տեղւոյն անձկութեան համար չենք կրնար մանրամասնարար թուել իր գործերը ու բռնած անկախ ու անվախ գիրքը որք ծանօթ են ժողովրդեան, այլ կրնանք մատնանիչ ընել թէլէֆօնի, ջուրի, լոյսի և Թրքթիներու նկատմամբ իր բռնած գիրքն ու պաշտպանած կողմը: Սըլունի խնդրոյն մէջ՝ իր համոզումն է Ժողովրդեան ձայնին հնազանդիլ և անոր որոշումը գործադրել՝ ամենայն խստութեամբ: Եւ արդէն իր պաշտօնավարութեան միջոցին ամէն անգամ որ այս խնդիրը ներկայացաւ ժողովին՝ նոյն գիրքը բռնեց միշտ Հայ քաղաքացիներու քուէն կը խնդրէ այս թեկնածուն, և եթէ ընտրուի՝ Հայք անոր մէջ պիտի գտնեն բարեկամ մը և համակիր մը զոր թերեւ շատեր սխալ հասկցած են ցարդ:

ՁԵԿՈՅՑ

Ֆրէզնօի իմ բարեկամներուս ու քուէատուներուն

Որպէսզի կարող ըլլամ արժանաւորապէս ուշադրութիւն դարձնել անձնական գործերուս և գործադրել պայմանագրութիւնս կրիֆին և Ըսքելի Ընկերութեան հետ, որուն համար Սըլունի մէջ (Քալ.) մեծ Ֆէնըրի մը կը կառուցանեմ հիմայ, անհրաժեշտ է ինձ համար Սըլունտ անցնել մեծ մասը ժամանակիս՝ այսօրուընէ սկսեալ մինչև քաղաքային ընտրութեանց օրը:

Դժբաղատաբար անկարող եմ անձամբ տեսնել իւրաքանչիւր քուէատու, ինչպէս որ իմ յարգելի մրցակիցներս կընեն հիմա. և այս միջոցին կը դիմեմ ճշտելու համար այն սխալ տարաձայնութիւնը թէ ես մնայուն կերպով հաստատուած չեմ Ֆրէզնօի մէջ, ուր հիմա և երկար տարիներէ ի վեր իմ տունս հաստատուած է եղեր:

Ֆրէզնօի չորրորդ Ոոօրտէն Սիթի Թրքթի ընտրուելու մրցման յաղթանակը չահելու ետեւ եմ հիմա և յարգանք Ֆրէզնօ քաղաքի բարի քաղաքացիներուն ու քուէատուներուն օժանդակութիւնը կը խնդրեմ:

(Ստորագրութիւն) Ի. Բ. Ըսմիթհ, Քընթրէկթըր.

ՔՈՒԷԱՐԿԷ

Սիթի Թրքթիի ՀԱՄԱՐ

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Կ Ո Ւ Օ Ր Տ Է Ն

ՎԱՍՆ ԿՐԷՆԹ ՅՕԼՔՍԹԻՆԻ

(ԱՅԺՄԵԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՑ)

Ընտրութիւնը Ապրիլ 12ին

Կ. Պօլսթին, Վեցերորդ Ուօրտի այգիեան Թրքթին, Ֆրէզնօի առաջնակարգ վաճառականներէն մին է ու հանրային յառաջդիմական մէկը: Պօլսթին նուագածունաց խմբի վարիչն է ինք, և իր նորհիւ էր որ, ի մէջ այլոց, քաղաքս ունեցաւ և ցարդ կը վայելէ շքանշանային նուագահանդէսներն հանրային պարտէզի մէջ: Կ. Պօլսթին ծառայած է քաղաքիս չորս տարի և եթէ վերընտրուի վստահ ենք թէ պիտի շարունակէ ծառայել ժողովրդի օգուտին համար: Քուէար անոր տուր:



ԷՍ. Հեկտորյան,

Նպարեղէն, Երկաթեղէն և Երկրագործական գործիներ

... Վայսէլիա, Քալիֆորնիա ...

Վայսէլիա և չրկայից Հայերը այս մեծ վաճառատունէն զընելով ոչ միայն ամեն բանի ընտիրը գնած կըլլան այլ գներու չափաւորութենէն կօգտուին մեծապէս ու հայասէր տան մը հետ կապուած կըլլան: Ետ Հայեր այս վաճառատան մնայուն յաճախորդներն են հիմայ: Առաջին անգամ զայն փորձողները ուրիշի երթալու սխալը գործած չեն բնաւ: Գուն ալ փորձէ, և գոհ պիտի մնաս ամեն կերպով:

ԷՍ. ՀԷՆՏԸՐՍԸՆ, Վայսէլիա, Քալ.

Խանութի Թէլէֆօն՝ մէյն 970 Տունի Թէլէֆօն՝ մէյն 2284

Սի. Է. Պրօուտոր և ռ Որդի

— Վաճառական —

ՊԱՏԻ ԹՈՒՂԹԻ

Ներկելու առն, շէնք ևն. Թինթ ընել և պատերը թուղթել

Գիներ կը տրուին շատ հաճութեամբ


2226 Թուրքա փողոց, Ծէլչնօ, քալ.

ՓԻԸՐՍ ԵՒ ԷՆՏԸՐՍԸՆ,

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾ

ԵՒ

Ա. Պ. Ա. Հ. Ո. Վ. Ա. Գ. Ր. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.



Թիւ 1152 ձէյ փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա.

Ամեն կարգի և ամեն տեսակ հաստատուն կալուածներ կը վաճառեն դիւրին պայմաններով: Կրակի ապահովագրութեան 27 գլխաւոր ընկերութեանց տեղական ընդհանուր ներկայացուիչներն են այս քաղաքիս մէջ:

Օ. Մաք Հեկտի ընկերութիւն

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՄՍԱՎԱՃԱՌՆԵՐ

Պատրաստ ենք միշտ գնել ու է քանակութեամբ արջատ, ոչխար, խոզ ևն. առաջնութիւն տալով միշտ տեղական կենդանիներուն:

Կովի, ոչխարի և խոզի ընտիր միս պատրաստ ունինք ամեն ժամանակ: Այս վէլի մէջ ամենաընտիր Սօսէճը կը շինենք մենք: Գիներու համար դիմելու է մեզ.

Գրասենեակ — Այ և Ֆրէզնօ փողոցներուն անկիւնը,

— Թէլէֆօն մէյն 270 —

ՖՐԷԶՆՈՅԻ ՖԸՐՍԹ ՆԷՇԸՆԸԼ ՊԷՆՔԸ

Վճարեալ դրամագումար — — — 500,000 տոլար
Աւելցած — — — — — 150,000 տոլար

Օ. ձ. Ուուալըրտ, Նախագահ, — ձ. Վօկըլ, Փոխ-Նախագահ
Ու. ձ. Ջիքիյ, քարտուղար, Է. Ա. Ուօլրօնտ, Գանձապահ: Բօյ Փուլիըմ' և ձ. ձ. Ուինսէնթ, օգնկն գնձապահ: Վարիչք՝ Ու. Հ. Քրօքը, ձ. Վօկըլ, Օ. ձ. Ուուալըրտ, Ու. ձ. Տիքի, Է. Ա. Ուօլրօնտ
Ֆրէզնոյի ամենաշին դրամատունն է ասիկա: —

U. S. Depository.

Փոխանակագիր կուտանք Խարբերդի, Էրզրումի և Օսմ. ուրիշ գլխաւոր քաղաքներու վրայ.

Նէշընըլ Պենք ալ Վայսէլիա

Վայսէլիա, Քալիֆ.

Դրամագումար 200,000 տոլար, Աւելցած և շահ 100,000 տոլար
Քլարէնս Սմիթի, Նախագահ Ս. ձ. Կիտինկս, փոխ Նախագահ
Լ. Ս. Հայտ, Գանձապահ Լ. Լ. Լօրէնս, Օգնական Գանձապահ
Թուրքա գաւառի Հայոց դրամապահ դրամատունն է այս որ
իր հայ յաճախորդաց համակրանքը շահած է արդէն:

ՖՐԷԶՆՈՅԻ ԻՆԻԴԸՆ ՆԷՇԸՆԸԼ ՊԷՆՔԸ

Դրամագումար — 150,000 տոլար:

ՕՕՕ ՊԱՇՏՈՆԵԱՄՔ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՕՕՕ

Ու. Օ. Մայըլ, Սի. Բ. Փըքէյպը, Ու. Բ. Փրայս,
Նախագահ Փոխ-Նախահ Գանձապահ
Բուտոյֆ Ըսփրէքըլ, Ս. Պ. Քարբ, Ա. Սաքս, ձ. Տ. Քալընս,
Ձ. ձ. Տաու, Ֆրէնք Բիւզօրն, Ս. Լ. Ուօլրօր, Քրիս. ձօրկնաւը
— Վարձու — Սէյֆ տիփագիրի պաքսեր —
Ներքին և օտար փոխանակագիրներ

ՁԵՂՁՈՒՄԾ ԳԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ ԳԱԼՈՒ

Մարտ և Ապրիլ ամիսներու մէջ

Նիւ Եօրքէն - 50.00 տոլ.
Օմահաէն - 25.00 տոլ.
Սէնթ Լուիզէ - 30.50 տոլ.
Չիքագօն - 33.00 տոլ.
Քէնզըս Սիթիէ - 25.00 տոլ.
Նիւ Օրլինսէն - 30.50 տոլ.

Բարեկամներդ բերել տուր Արևելէն մեր միջոցաւ

Մըտըրն Փահիֆիք-Քըմքնի,

ՖՐԷԶՆՈ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ.

ՊԷԼ ԵՂԲԱՐՔ,

ՀԱՅՈՑ ԾԱՆՈԹ ՄԵՌԵԼԱԲԱՐՁՆԵՐԸ

Հէրիս պաք, Ֆրէզնօ փողոց, ձէյի և-Քէյի մէջտեղ.

Թէլէֆօն,—Մէյն 160, — — — Ֆրէզնօ, Քալիֆորնիա,

ՀՕՐԷԼ ՆԱՏԻԹՕ ԼՕՍ ԱՆՃԸԼԸՍ

Քալիֆորնիա

Ամենակեդրոնական դիրք — — — — — Չափաւոր գին
— Առաջին և Սփրինկ փողոցներուն անկիւնը —

ԹԻՔՄ

Վ Զ Ա Ր Ո Ղ Ն Ե Ր ՈՒ Ն

Թեքստերուն երկրորդ վր-
ձարունակն ատենն է հիմա
ու Վձարելի է Թեքս Քը-
յէքքրին օֆիսը, ի Քօրթ
Հաւոզ, Ֆրեզիօ, Քալ. եւ
եթէ չը Վձարունակն միւսը
Ապրիլ 26, երկկոյնեան
Ժամը 6, ատենը ակցած
կրկայ: Այդ քոչակակեն
վերջ 5 առ հարիչը տոչ-
գանք պիտի տրոչի: Որ-
ոչեալ ժամանակը չիրևար
երկարաձգոչի:

Ա. Պ. ՆՍՄԻԹ-Հ,
Թ Ե Ք Ա Ք Ր Ն Ե Ք Ք Ր Ր,
Ֆրեզիօ Քաւերի

ՎԱՅՍԵԼԻԱ ԵԿՐԻՔԸԼԶԸԸԸ ՈՒՕՐՔՍ

Ա. Տ. ՄՕՕՐ, Սեփականատէր

Չի պայտել Մ ա ո ն ա լ ո Ր ո լ Թ Ի Լ Ն

388 Մէյն փողոց Վալսելիա, Քալ.

Փիփրոյ՝ս Մարքէթ

Ճ. Թ. Մորկըն

Մէյն փողոց, նախկին թատրոնին տեղը,

— Վալսելիա, քալիֆօրնիա —

Ամեն տեսակ թարմ և պատրաստուած միս

Սօսէճ, պէյթըն, հէմ, լառտ ևն. ևն

Գինեքը միշտ չափաւոր են.

ԱՌՉԻՊՈԼԹ

ԷՄՓԼԻՄԷՆԹ

Ք Ր Մ Ք Ն Ի Ն

— 915-917 ձէյ փողոց, Ֆրէզնօ —

Այս ծանօթ տունը կը վաճառէ երկրագոր-
ծական ամեն տեսակ մեքենայ, կառք գոր-
ծիք, հարնէս ջրհան ևն. ևն. շատ չափաւոր
գներով ու դիւրին պայմաններով:

Ճան Տիիրի գործիքներն

— ՈՒ —

* * ՓԻԹԸՐ ՇԸԹԹԸԼԻ ԿԱՌԲԵՐԸ * *

* * միայն մեր քով կը ծախուին * *

Լաւը միշտ աժան է եթէ սովորականէն
աւելի ալ վճարես անոր, բայց մեր գինեքը
բարձր չեն բնաւ: Եկուր տես մեզ գներէ
առաջ, կամ մեր հայ յաճախորդներէն ունէ
մէկին հետ գնա տեսնուէ այս մասին:

սենեկ գնես յաւը կը գնես

. Բ. ՀԻԿԻՆՍ Թէլէֆօն Բէտ 157
1156 Այ ՔԵԷՄՊԵՏ
փողոց ՍՕՌՈՒՏԻՕՐ Ֆրէզնօ,
Քալ.

Նահանգիս ամենաառաջնակարգ
տուներէ մին որ կը լուսանկարէ
ամեն ինչ՝ վերջին կատարելա-
գործութեանց համաձայն . . .

Մասնաւորութիւն՝ պատկեր մեծցնել, ար-
թիսթ փրօֆ, տեսարան և խումբեր գծել:



Ամենաընտիր Լուսանկարները գէշ տե-
սակներէն շատ աւելի շոգհացուցիչ են, ան-
անկ որ գնոյն պզտիկ տարբերութիւնը նը-
կատողութեան առնուելու չէ: ՄԱՔՍՈՒԷԼ
և ՄԸԼՃ միշտ կը ջանան շինել պատկեր-
ներ որոնք թէ իրական ճշտութիւնը կը
ներկայացնեն և թէ բացարձակապէս մը-
նայուն են:

Ըսթուտիօն՝ Շէյ և Ֆրէզնօ փողոց-
ներուն անկիւնը:

ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՒՔ
Ընտրութիւնք կը կատարուին Ապրիլ 12, '09

Քաղաքապետի համար

ՈՒ. Յ. ԹՈՒՄԻ

Սիթի Թրըսթիի համար

Ա. Հ. ՓԵՐԻՇ

Ֆրէզնօի եօթներորդ Ուօրտին կողմանէ

Ռատիկանական Դատաւորի համար

Հ. Յ. ՊԻԻԿՍ

(Այժմեան Դատաւորը)

Ռատիկանական Դատաւորի համար

ՖՐԷՆՔ ԼԷՆԻՆԿ

Սիթի Թրըսթիի համար

Ս. Ճ. ՊԸՐԼԻՅԵ

Ֆրէզնօի երկրորդ Ուօրտին կողմանի

Սիթի Թրըսթիի համար

Ճ. Ս. ՓԱԹԹԸԼ

Ֆրէզնօի երկրորդ Ուօրտին կողմանի

Սիթի Թրըսթիի համար

Տ. Հ. ՈՒԻԼԻԸՄՍ

Ֆրէզնօի ութերորդ Ուօրտին կողմանէ

Սիթի Թրըսթիի համար

Ա. Լ. ՄԷՆԻԸՐ

Ֆրէզնօի առաջին ուօրտին կողմանէ

Դպրոցներու Հոգաբարձութեան համար

Ճ. Յ. ԿՕԼԼԸՄԷՆ

Դպրոցներու Հոգաբարձութեան համար

Լ. Լ. ԱՐՉԻՊՈԼՏ

Սիթի Թրիսթիի համար

ՃԷՕՐՃ ՓԻՔՖԸՐՏ

Ֆրէզնօի եօթներորդ Ուօրտին կողմանէ

ԸՆՏՐԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՌՈՒԹԻՒՆՔ
Ընտրութիւնք Կըլլան Ապրիլ 12ին. 1909.

ՍԻԹԻ ԲԵՐԵՔԻ Համար

ՈՒ. Հ. ԲՍՅԸՆ

(այժմեան պաշտօնակալը)

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

ՍԻ. Մ. ՉԱԼԼԸՔ

(Ներկայ պաշտօնեայն)

Ֆրէզնօի երկրորդ Ուօրտին կողմէն

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

ԸՐՆԸՍԹ ՔԼԷԹԹԻ

(Ներկայ պաշտօնեայն)

Ֆրէզնօի երրորդ Ուօրտին կողմանէ

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

ՈՒ. Հ. ԹԵՔԲԸՐ

Ֆրէզնօի երրորդ Ուօրտին կողմէն.

Քաղաքապետի Համար

Ճ. Տ. ԸՍԹԷՏՀԸՄ

Քաղաքապետի Համար

ՃԵՂ Պ. ՄԱՅԸՐՄ

Որ գինեատունները գոցելու կը հաւտայ

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

ԿՐԱՆԿԻ ՖՕԼՔԸՆՍԹԻՆ

Ֆրէզնօի վեցերորդ Ուօրտին կողմանէ

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

ԻԻՃԻՆ Բ. ՇՍՄԻԹՀ

Ֆրէզնօի Չորրորդ ուօրտին համար

Պ. Մ. ՀԵԿ. ՈՐԿԻ

Ֆրէզնօի առաջին Ուօրտին կողմանէ

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

Ա. Է. ՇՍՆՕ

Ֆրէզնօ քաղաքի ութերորդ ուօրտի կողմէ.

ՍԻԹԻ ԹՐԸՍԹԻԻ Համար

Ճ. Ն. ԸՍՓՐՍԻՉ

Ֆրէզնօի վեցերորդ ուօրտին կողմանէ

Դպրոցներու Հոգաբարձութեան Համար

ՈՒ. Ճ. ՔԻԹՈՒԸԼԼ

Դպրոցի Հոգաբարձութեան Համար

Օ. Մ. ԹԱՄՍԸՆ

(Այժմեան Պաշտօնեայ)

Ֆրէզնօի յաջորդ Քաղաքապետը



ՈՒ. Յ. ԹՈՒՄԻ

Պէնք ալ թոշարա

Թուլարա, Քալիֆօրնիա.

Վճարեալ գրամագլուխ 50,000 տոլար

Յաւելում՝ 35,000 տոլար

Պաշտօնեայք: Ի. Լէյթրըպ՝ նախագահ, Ճ. Կօլտմըն՝ փոխ-նախագահ, Լ. Լ. Էպլըրթօն-պի՝ գանձապահ, Ու. Փ. Ուիլլմս՝ փոխ-գանձապահ, Վարինչերի Ի. Լէյթրըպ, Ճ. Կօլտմըն, Ճ. Հ. Մօրթըր, Տ. Պ. Մօօր, ՃօլըՄարշ Թուլարայի Հայերը տարիններէ ի վեր այս գրամատան հետ կընեն իրենց գրամական բոլոր գործողութիւնները: Ամենապահով տեղն է Վսաահէլի տեղեկութիւններ ստանալու տեղական ամեն տեսակ կալուածներու նկատմամբ:

- ՀԱՅ -

Մի գներ ոչրիչեկ

մեր պատրաստածները տեսնալէ առաջ

Ոչ մի հացագործ կրնայ մրցիլ հիմայ մեզի հետ: Պարապ խօսք չէ աս. հինգ սէնթով կրնաս փորձ մ'ընել և համոզուիլ:

Ուրիչներէ միս գնէ բայց մեր հացը կեր.

ՆԻԻ ԻՆՎԼԸՆՏ ՊԷՅՔԸՐԻ

Ա. Ատուրեան և Ընկ.

1323 Քըրն փողոց, Թէլէֆօն մէյն 2537

Տիգրանի Սարոյեան

- Հայ Սափրիչ -

1217 Քէյ փողոց, Ֆրէզնօ.

Աժիլել 10 սէնթ - մազ կտրել 20 սէնթ

ՈՒՂՂԱԿԻ ՖԼՕՐԻՏՍՅԵՆ ԱՏԱՅԱԾ Է

Չ Մ Ե Ր Ո Ի Կ Ի Ը Ն Տ Ի Ր



ՍԻՏ ՏԷՓԱՐԹՄԷՆԻ

Հիւզ Հօթէլին զիմացը, Թուլարա փողոց,

- Ֆրէզնօ, Քալիֆօրնիա -

Փորձէ մեր կերակուրները: Իրենց տեսա-
-կին մէջ ամենէ լաւերն են ի Ֆրէզնօ-

Իռ Էս Ճաշարանը

852 Ա. փողոց, Ֆրէզնօ.

- Ճաշի թիքէթներ գնելով՝ զրամ խնայէ -

22 հատ 15 սէնթնոց ճաշ 3 տոլ.

[11 հատ 15նոցը՝ 1,50Ի

Լեռնի Անրոյեան

- Ս Ս Փ Ր Ի Չ -

Ի գիտութիւն բոլոր հին յաճախորդներու՝ կը ծանուցանեմ որ, Սափրիչի նոր խանութ մը բացած եմ 921 Ա. փողոցին վրայ: Օտարին երթալով հաճոյք մը կըզգա՞ք

Աժիլել 10 սէնթ, մազ կտրել 20 սէնթ:

Օ. Տարաէլիս

Ֆրանսական

Հ ա գ ա գ ո թ

1220 Քէյ փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա

Փորձէ անգամ մը մեր Ֆրէնչ և կամ Քուէյքը հացերը: Երկուքն ալ կը յարմարին հայկականէ ճաշակի:

Քաղաքիս Էնթի-Սըլուն ակումբը կը ջանայ Ֆրէզնօի Սըլունները գոցել ու Ապրիլ 12ին այս խնդիրը քուէի պիտի ենթարկուի: Կերևի որ, առանց տարակոյսի. եթէ Սըլունները փակեն պիտի աշխատին յայնժամ քուէարկութեամբ դադրեցնել այս գաւառի մէջ պատրաստութիւնը, վաճառումը և գործածութիւնը գինիի կամ ուրիշ օղիներու:

Այս բանը կը նշանակէ թէ մեր գինետուններուն չի պիտի արտօնուի գինի չինել, թէ մեր գինիի խաղողներն ու այգիները գին չի պիտի ունենան, նոյն իսկ չամիչի խաղողներուն գինը այս օրուան գնոյն կէսը չի պիտի արժէ: Սըլուններու փակուելը ու ոգելից ըմպելեաց վաճառումին արգելուիլը արբեցողութիւն ու եղեռնագործութիւնները չեն նուազեցնել: Ուրիշ նախադէտերու Ըսթէթիսիկները կ'ապացուցանեն այս բանը: Ժողովարդը գեղծելով օրէնքը պիտի գնէ զայն ալեւայլ միջոցներով: Այս առաջարկուող օրէնքը, սակայն, ոգելից ըմպելեաց վաճառումը կարգիէ Սըլուններու մէջ ու կ'արտօնէ անոնց վաճառումը ուրիշ տեղեր՝ ինչպէս ճաշարաններու, պանդոկներու և մեծաքանակ վաճառատանց մէջ, անանկ որ քուէարկելով այս օրէնքը արբեցողութիւնը չենք վտարել, այլ մեր ստացուածոց արժէքը կը նուազցնենք. ստիպած կըլլանք նմանապէս Ֆրէզնօի քաղաքացիները 26,800 տղար աւելի թէք: Վճարել, որ մեր քաղաքային կառավարութեան ամէն աղբիւրներէ ստացած դրամներու մէկ հինգերորդէն աւելի է:

Այս գումարը պիտի գոցուի քաղաքիս կառուածներու արժէքը բարձրացնելով կամ ուրիշ ամէն տեսակ դարձոց արտօնագիրներու գինները աւելցնելով: Մինք պատճառ մը չենք տեսնար թէ ինչո՞ւ համար խմելիք ծախուելու չէ Սըլուններու մէջ որպէս ուրիշ տարբեր ձևերու տակ, և քանի որ այս օրէնքը վաճառումը չարգիլելու ուրիշ ու է կերպով բացի արտօնեալ Սըլուններու մէջ, ինչո՞ւ պէտք է Սըլունները վերցնել մէջտեղէն, թէքսերը բարձրացնել ու մեր այգիներուն գինները իջեցնել:

Գինիի և չամիչի խաղողները այս գաւառիս մեծագոյն հարստութիւնը կը կազմեն այսօր: Եթէ մեր գինիի խաղողին շուկան քանդենք, պատճառ կուտանք գինիի խաղող ունեցողները չորցնելու զայն ու չամիչ չինել, որ կը ծառայէ չամիչի արդի գինները աւելի պակասեցնելու: Էնթի-Սըլուն շարժման պատմութիւնը Միութեան մ/ւս ու է նախադէտերու մէջ եղած է՝ նախ խմելիքներու վաճառումը կեցնել Սըլուններուն մնջ և ապա շարունակելով՝ ու է միջոցաւ անոր վաճառումը ու պատրաստութիւնը արգիլել: Քալիֆօրնիա նախնոր գինի արտադրող ամենամեծ գաւառը այս պարագաներու և դրութեանց տակ գիտակցարար աւելցնելու չէ իր տուրքերը ու նուազցնելու չէ իր կառուածներու արժէքը այս օրէնքին ի նպաստ քուէարկելով: *

Ա. ճ. Պըրլի-Քաղաքիս Չրգ Ուօրտէն Սիթի Թըրքիսի ընտրելի է այս անձը որ 35 տարի շարունակ ապրած է այս քաղաքիս մէջ: Առաջին անգամն է որ հանրային պաշտօնի կը ձեռնարկուի, և եթէ ընտրուի իր նպատակը պիտի ըլլայ ծառայել բոլոր ժողովրդեան: Լա կը ճանչնայ բոլոր հին Հայերն ու շատերուն օգնելու պատեհութիւն ունեցած է: Կը սիրէ զանոնք և կը յարգուի անոնցմէ: Կը հաւտայ մաքուր, ազատ և յառաջդիմական կառավարութեան մը, կը հաւտայ նաև մեծամասնութեան ձայնին. եթէ ժողովուրդը քուէարկէ Սըլունները գոցել, անոնց կամքը իր օրէնքը պիտի նկատէ: Մեծ խոստումներ չընել Պըրլի, բայց եթէ ընտրուի ամէն ջանք պիտի ընէ հանրութիւնը գոհացնելու:

Ճ. Լ. Պէլլ. — Գպրոցներու Հոգաբարձութեան համար ուրիշ կարևոր ընտրելի մըն ալ ունինք յանձին Ճ. Լ. Պէլլի, որ մէ աւելի յարմար մէկը կարելի չէ գտնել այս քաղաքիս մէջ այդ մասնաւոր պաշտօնին համար, որ թէև խիստ կարևոր ու փափուկ գործ մըն է, բայց անվճար է բոլորովին, քանզի զրամը չի կըրնար փոխանակել զայն: Պէլլ Հայոց քաջամանօթ մեռելաբարձն է: Բարեկամներու թախանձանօք ընդունուած է թեկնածու ներկայանալ, և տարակոյս չիկայ թէ ժողովուրդը պիտի ընտրէ զայն: Պէլլ իր կրթութիւնը առած է Սան Էջէի Նօթմըլ դպրոցին մէջ՝ վարժապետ ըլլալու համար: Ընթացաւարտ ըլլալէ վերջ վարած է ի Ֆրէզնօ 10 սարի վարժապետութեան և այնչափ ատեն ալ մօտաւորապէս տեսչութեան պաշտօնը հանրային վարժարանաց մէջ: Իր աշխատութիւնը աւելորդ է ըսել թէ գնահատուած է ամէն կողմէ: Ժողովրդական մարդ է ինք, ազատամիտ, ուղղախոհ ու հեղաբարոյ մէկը որ բարեկամներու շատ ընդարձակ շրջանակ մը կազմած է իր բոլորտիքը ժողովրդի ամէն դասակարգերուն մէջ:

Ֆրէզնօի քաղաքացիք աւելի յարմար մէկը չեն կրնար ընտրել այս պաշտօնին որուն համար մարդ ծնած ըլլալու է զայն կատարելապէս վարել կարենալու համար: Քուէդ Պէլլին տուր:

Տքթ. Չ. Բաւըլ. — Քաղաքացիտի համար ընտրելի է նաև Տքթ. Բաւըլ որ շատ տարիներէ ի վեր Հայոց ամէն մէկ անհատին քաջամանօթ բժիշկ մ'է և որ յանձն առած է թեկնածու ըլլալ շատ մը ծանօթ քաղաքացիներու թախանձանօք: Տքթ. Բաւըլ ոչ մէկ թերթի մէջ հրապարակու գիմած չէ ժողովրդի քուէին, և բնաւ անձնական ջանք մը չընել ընտրուելու համար: Անոր համոզումն է թէ ժողովուրդը եթէ կը փափակի զինքը կոչել այդ պաշտօնին՝ քուէ տալու է իրեն առանց դիմումի և առանց անհատական ջանքերու: Տքթ. Բաւըլը ծանօթացնելու պէտք չկայ. անկէ աւելի ծանօթ Ամերիկացի մը չեքն գիտեր այս քաղաքիս մէջ:

ԱՊԱՀՈՎԱԼ ԷՊԸՍԹՐԷՔՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՏԵՂԸ

Երբոր գնելիք երկրիդ ճշգրիտ մէկ էպսթրէքթը ձեռք կը սերես՝ հաճելի բան մըն է գիտնալը թէ նոյն էպսթրէքթը քեզ տուող ընկերութիւնը վստահելի հաստատութիւն մըն է, և թէ ունի իր ետև դրամական կարողութիւն նոյնը ապահովելու համար: Կարելի է այս բանը ըսել Ֆրէզնօ Քառնթի էպսթրէքթ Քմրնի ընկերութեան մասին որ հաստատուած է 1871 թուին և ունի 100,000 տուարի վճարեալ դրամագումար: Այս ընկերութիւնս կուտայ երկրի մը կատարեալ էպսթրէքթը, գաւառէս դուրս բընակողներուն թէքսերը կը վճարէ իրենց հաշուոյն և 'էսքրօ' գործառնութեանց կը նուիրէ մասնաւոր ուշադրութիւն: Եթէ կը խորհիս կտոր մը երկիր գնել՝ հարկուաւոր տուարներ կրնայ ըլլալ որ շահիս եթէ գնելէ առաջ այսպիսի ընկերութեան մը ստանաս նոյն երկրին կատարեալ էպսթրէքթը:

Ֆրէզնօի Ծարւեր'ս Նէշնըլ Պէնքը

ԳՐԱՄԱԳՒԼՈՒԻ ՈՒ ՍԸՐՓԼԸՍ . 400,000-00 Տղար
ԱԼՖՐԷՏ ՔԸԹՆԸՐ, Նախագահ ՈՒՍԹԸՐ ՇՈՒՄԷՑՔԻ, Գանձպահ,
Է. Է. ՄԱՆՉԷՑՄ, Փոխ Նախագահ և Տնօրէն.
Չօրաւոր, Ապահով և պահպանողական կերպով կառա-
..... վարուած դրամատուն մը

U. S. DEPOSITARY.
Անհատներու, ընկերութեանց և քօրփորէչըններու
— դրամահաշիւները կը հրատարակին —